

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԻՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԱԻ
ՄԱՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ
ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ԿՈՉ ՈՒՂՂԵՅ ՍՈՒՐԻՈՅ ՀԵՏ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍԵՐՏԱՅՄԱՆ

Նախարարաց խորհուրդը երեկ թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մեջ գումարեց իր հերթական նիստը. նախագահությամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Բացակայեցան նախարարներ Սլեյման Ֆրեմիե, Թալալ Արալան, Ալի Ապտալա եւ Փիեռ Հըրլու: Ժողովը քննարկեց 41 կետերի բաղկացած օրակարգ մը:

Ելեմուտքի նախարար Ֆուադ Սինիորա ժողովին ընթացքին նախարարներուն բաժնեց 2002ի պիտոճիի նախագիծի օրինակներ:

Նախագիծի քննարկումը պիտի կատարուի յառաջիկայ Հինգշաբթի օրուան կառավարության նիստին ընթացքին:

Վարչապետ Հարիրիի հաւաստեց, որ նիւթական բացը անցեալ տարուան պիտոճին բաղդատած՝ նուազած է. 51 առ հարիւրէն 40 առ հարիւրի. ինչ որ դրական պիտի ընկալուի ժողովուրդին կողմէ:

Նիստին ընթացքին, իբրեւ պատասխան մարտնի եպիսկոպոսներու խորհուրդին հրապարակած նախանցեալ օրուան հաղորդագրութեան, որ վերստին կ'արծարծէր Լիբանանի մեջ սուրիական ուժերու վերադասաւորման հարցը, վարչապետ Հարիրի կոչ ուղղեց Սուրիոյ հետ երկկողմանի յարաբերութիւններու սերտացման եւ քաղաքական վեճերու կասեցման, ներքին կայունութիւնը ամրապնդելու եւ լիբանանցիներու արտագաղթը դադարեցնելու նպատակով:

«Տնտեսական տագնապը իւրաքանչիւր լիբանանցիի հոգն է, իսկ անոր յաղթահարման

համար անհրաժեշտ է քաղաքական կայունութեան կողքին՝ միասնաբար աշխատանք տանիլ: Քաղաքական կայունութիւն կերտելու համար պէտք է վերջ տանք բոլոր վեճերուն եւ կասեցնենք ղեկավարներուն միջեւ մրցակցութիւնները», ըսաւ Հարիրի:

Հարիրի յայտնեց, որ քաղաքական ոչ կայուն կացութիւնը լիբանանցիներուն նպաստաւոր չէ եւ արտագաղթը չի կասեցնէր: «Մենք, կառավարութիւնը, համաձայն ենք նախագահին եւ
Ծար-ը՝ էջ 10

ՏԵՐԳՐԸ, ՑԵՂԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԱԿԻ ԽՈՐՀՐԴԺՈՂՈՎ

ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔԻ ՀԱՐՅԻՆ
ԳԾՈՎ ԾԱՅՐ ՏՈՒԱԾ ԱՆԵԼ
ՎԻՃԱԿԸ ԿԸ ՅԱՄԵՆԱՅ

ՏԵՐԳՐԸ, 6 (ՌՈՅԹԸՐԸ).- Հարաւային Ափրիկէի միջնորդութեամբ տեղի ունեցած նախաձեռնութիւն մը Հինգշաբթի օր չէ յաջողած վերջ տալ ցեղապաշտութեան վերաբերեալ ՄԱԿի խորհրդածողովին մեջ Միջին Արեւելքի հարցով ծայր տուած անել վիճակին:

Բանագնացներ երկուշաբթի օրուրնէ ի վեր պայքար կը մղէին Ուրբաթ օրուան ժամկետին առաջ միջին ելք մը գտնելու համար՝ իսրայէլեւպաղեստինեան բրտութեանց եւ ստրկութեան հարցերով բանաձեւի մը նախագիծին մեջ գործածուող արտայայտութիւններուն գծով:

Եւրոպական Միութեան պետութիւնները յայտնած են, թէ իր լայն գիծերուն մէջ անոնք ողջունած են Հարաւային Ափրիկէի կողմէ առաջարկուած յօդուածը, զոր պատուիրակներուն ներկայացուած է խորհրդածողովին եօթներորդ օրուան առաւօտուն:

Սակայն արաբական եւ իսլամական երկիրներ յայտնած են, թէ փաստաթուղթը տակաւին շատ հեռու է իր ներկայ ձեւին մէջ ընդունելի ըլլալէ:

Նորագոյն նախագիծը կը ճանչնայ պաղեստինցի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը եւ «օտար գրաւումի ներքեւ պաղեստինցի ժողովուրդին դժուարին կացութիւնը»:

Անիկա հրաժարած է նախապէս մշակուած նախագիծերու մէջ գործածուած արտայայտութիւններէ, որոնք Իսրայէլը ցեղապաշտ պետութիւն մը կ'որակէին: Սակայն անիկա կ'ընդգրկէ հակաանկախութեան դատապարտում մը եւ կ'ըսէ, թէ Ողջակիզումը «բնաւ պէտք չէ մոռցուի»:

Ինչ կը վերաբերի անդրատլանտեան ստրկութեան հարցին, անով վբաղող պատուիրակները ըսած են, թէ որոշ յառաջդիմութիւն մը արձանագրուած է, սակայն վերջնական համաձայնութեան մը գոյացումը շատ հեռու կը մնայ:

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒՂԱԹԻՈՒՆԵՐ
ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ԸԱՐՈՒԱԾԵՆ

ԵՐՈՒՍԱԳԷՄ, 6 (ՌՈՅԹԸՐԸ).- Իսրայէլեան ուղղաթիւներ Այսրորդանանի մէջ հարուածեցին պաղեստինեան կեդրոններ, մինչ Թուլքարմի մէջ ուղղաթիւն մը արձակուած իրթիդի մը կոհ գացին Ֆաթիի երկու անդամներ, որոնք կը գտնուէին ճիւղի մը մէջ: Սակայն Ֆաթիի գլխաւոր անդամ մը՝ Ռաէտ Քարմի, որ թիրախն էր յարձակումին, փրկուած է մահէ ու վիրաւորուած, կը հաղորդէ իսրայէլեան բանակը: Ըստ Իսրայէլի Քարմի կը ծրարէր իսրայէլեան թիրախներու վրայ յարձակումներ: Թուլքարմի դէպքը կը պատահէր միայն օր մը ետք այն դէպքէն, երբ Կապալի մէջ պաղեստինեան ապահովական կեդրոն մը քանդուած էր իսրայէլեան ցամաքեցամաք հրթիռով մը:

ԱՐԻԷԼ ԶԱՐՈՆ
ՎԵՐԱԳՐԱԾԱԻ
ՍՈՍԿՈՒԱՅԵՆ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն երեկ վերադարձաւ Մոսկուա եօթնայայցելութեան: Ան Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ ունեցած էր շարք մը տեսակցութիւններ, որոնց շարքին՝ նախագահ Վլատիմիր Փութինի հետ, որպէս ի ռուսական ճնշում բանեցուի պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատի վրայ՝ վերջ տալու համար բախումներուն:

ՎՏՈՎԻՆ ԶՐԶԱՆ
ԿԸ ԺԱՄԱՆԵ
ԶԱՐԱԹԱՎԵՐՋԻՆ

Միջին Արեւելքի ռուս յատուկ բանագնաց Անտրէյ Վտովին կրնայ շաքարավերջին շրջան ժամանել, շարունակելու համար Մոսկուայի մէջ պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատարի մը հետ իր բանակցութիւնները, կը հաղորդէ «Ինթերֆաքս» լրատու գործակալութիւնը երեկ:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Վտովինը շտապօրէն ուղարկեց շրջան, Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի խոստանալէն ետք, որ Մոսկուա կ'ուզէ բազմապատկել ջանքերը՝ ի մասնէ բախումներուն վերջ տալու նպատակով:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատի խորհրդական Մահմուտ Ապպաաի հետ տեսակցելէ ետք, Վտովին այսօր պիտի ուղղուի շրջան, մինչ

Մահմուտ Ապպաա կը մնայ Մոսկուա, տեսակցելու համար արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի հետ:

ԱՐԻԷԼ ԶԱՐՈՆ
ՎԵՐԱԳՐԱԾԱԻ
ՍՈՍԿՈՒԱՅԵՆ

Իսրայէլի խորհրդարանի (Բնեթեթ) բանբերը՝ Աւրահամ Պրիկ երեկ ինքզինք յաղթական նկատեց Աշխատաւորական Կուսակցութեան ընտրութիւններուն, ուր երկու օրէ ի վեր երկուստեք կը կատարուին կեղծարարութեան ամբաստանութիւններ:

Ոչ պաշտօնական տուեալներու համաձայն՝ Պրիկ չնչին առաւելութեամբ յաղթական է, սակայն տակաւին պաշտօնապէս ոչինչ յստակ է կամ յայտարարուած է այս գծով:



Այրպէյճանի Ալգալին Ապահովութեան նախարար Նամիք Ապպասով երեկ Իրանի նախագահ Մոհամէտ խաթեմիի հետ տեսակցութիւն մը ունեցաւ: Տեսակցութիւնը կ'իյնար շարք մը բանակցութեանց ծիրէն ներս, որոնց նպատակը երկու երկիրներուն միջեւ լարուած վիճակը մեղմացնել է: Լարուածութեան պատճառը կասպեան քարիւղը օգտագործելու տարակարծութիւնն է: Իրանեան պիւնուրական օդանւեր եւ մարտանաւեր հրահանգած էին Այրպէյճանի համար պեղումներ կատարող նաւու մը հետնալ, այլապէս սպառնալով կրակ բանալ անոր վրայ: Նաւը ենթարկուած էր իրանեան հրահանգին:

ՀԱՄԱՍ ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ԵՐՈՒՍԱԳԷՄԻ ՄԵՋ
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՆՁՆԱՄՊԱՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Իսլամական պինեալ Համաս կազմակերպութիւնը երեկ ստանձնեց երեքշաբթի օր Երուսաղէմի մէջ տեղի ունեցած անձնասպանական գործողութեան պատասխանատուութիւնը: Պաղեստինցի մը Արեւմտեան Երուսաղէմի մէջ ինքզինք պայթեցուցած էր, վիրաւորելով 15 իսրայէլացիներ:

Համաս կը հաղորդէ, թէ պաղեստինցին կը կոչուի Ռաէտ Պարդուքի, որ Ռամալլայէն է: Անոր տարիքը չյայտարարուեցաւ, սակայն ըսուեցաւ, որ ան ուսուցիչ է: «Անիկա միայն սկիզբն է ապագայ շարք մը գործողութիւններու, որոնք պիտի պարտադրեն ահաբեկիչներ Արիէլ Շարոնին եւ զօր, Շաւուլ Մոֆապիւն, որ ընդունին իրենց պարտութիւնը», կ'ըսէ Համասի հաղորդագրութիւնը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ
ԿԱՅԱՑԱՆ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Չորեքշաբթի, 5 Սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւնները՝ 230 համայնքներու մէջ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան աղբիւրներ հաղորդեցին, որ համայնքներու ղեկավարներու պաշտօնին համար մրցած են 360 թեկնածուներ, իսկ աւագանիի անդամներու համար՝ 1550 թեկնածուներ: Ստեփանակերտի քաղաքապետի պաշտօնին համար մրցած են վեց թեկնածուներ: Քուէատուփերը բացուած են առաւօտեան ժամը 7:00ին (Արցախի ժամով) եւ փակուած՝ երեկոյեան ժամը 8:00ին:

Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկարի Դուկասեան անդրադառնալով ընտրութիւններու կայացման, յայտնեց, որ ընտրութիւնները համոզիչ ցուցանիշ են Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան իբրեւ պետականութիւն կայացման:

Իր կարգին, Լեռնային Ղարաբաղի արտաքին գործոց նախարար Նաիրա Մելքումեան յայտարարեց, թէ ընտրութիւններուն ժողովուրդին մեծաթիւ բանակցութիւնը փաստ է, թէ ժողովուրդը բանակաւաճափ գիտակից է եւ իր ապագային համար է, որ կը քուէարկէ: «Ռոյովիտեւ Եւրոպական Խորհուրդը քաղաքականացուց ընտրութիւններուն կայացումը, կը հաւատամ, որ ժողովուրդին մասնակցութիւնը Խորհուրդին ցոյց կու տայ, թէ ժողովուրդը կը վստահի իր առաջնորդներուն», աւելցուց նախարարը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Նաիրա Մելքումեան յայտարարեց, թէ ընտրութիւններուն ժողովուրդին մեծաթիւ բանակցութիւնը փաստ է, թէ ժողովուրդը բանակաւաճափ գիտակից է եւ իր ապագային համար է, որ կը քուէարկէ: «Ռոյովիտեւ Եւրոպական Խորհուրդը քաղաքականացուց ընտրութիւններուն կայացումը, կը հաւատամ, որ ժողովուրդին մասնակցութիւնը Խորհուրդին ցոյց կու տայ, թէ ժողովուրդը կը վստահի իր առաջնորդներուն», աւելցուց նախարարը:

استفد من عرض
PLANER®
أقلام النّوعيّة
واربح عشرات الجوائز

الوكلاء المعتمدين : مؤسسة رزق للصناعة والتجارة - درعون - حريصا
تلفون : ٢١٦٧٨٠ (٠٩) - ٢١٦٧١٠ (٠٢) - فاكس : ٢١٦٧٩٩ (٠٩)

«ԱՐԻՆ» ՀԱՄԱԼԻՐ
ՊՈՒՐՃ ԸԱՍՈՒՏԻ ՄԷՋ
ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹ

ԸՏԱԶԵՐԵՐԱԿԱՆ ԳԻՆԵՐՈՎԾԱԽՈՒ ԵՆ
30ԷՆ, 300 ԶԱՌ, ՄԵԹՐ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՄԲ
ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ, ԽԱՆՈՒԹՆԵՐ, ՍՐԱՇՆԵՐ

ՊՈՒՐՃ ԸԱՍՈՒՏԻ
ՄԷՋ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ
«ԱՐԻՆ» ՀԱՄԱԼԻՐԸ
ԿԸ ԴԱՌՆԱՅ
ԱՌԵՏՐԱԿԱՆ
ԿԵԴՐՈՆ

Յաւելեալ
մանրամասնութեանց
համար հեռաձայնել
03/618806 քիւիմ

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԱԻ ...

Ծառուճակուած Ա. ԷջէԳ

խորհրդարանի նախագահին հետ միասնաբար գործակցելու եւ կը յուսանք, որ բոլորն ալ մեզի հետ աշխատին քաղաքական ներքին կառուցութիւնը ամրապնդելու եւ սուրիացի մեր եղբայրներուն հետ յարաբերութիւնները սերտացնելու համար», աւելցուց ան:

Ժողովը վաւերացուց Լիբանանի ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարարութեան կողմէ սուրիական քարիւղի ընկերութեան ծախուելիք կապին մասին համաձայնագիրի նախագիծը, ինչպէս նաեւ վերաշինութեան խորհուրդին կողմէ Թրիփոլի մէջ կատարուելիք ըմպելի ջուրի ցանցի նորոգութեան որոշումը:

ՀԵՊԵՅՔԱ – ԺԵՄԱՅԵԼ...

Ծառուճակուած 2րդ ԷջէԳ

ընթացքին անոր փոքր տարիքը, եւ ապա անոր սորվեցնողները, որոնք իրենց ուզած ձևով բացատրած են ամէն ինչ, որոշ նպատակներու համար, չենք մեղադրեր քիւնք:

Բ. – Վերջերս հեռու կը մնանք որոշ հարցերու թղթածրարներէ, որոնք կ'արծարծուին երեսփոխան Ժեմայելի եւ անոր «նեցուկ»ներուն կողմէ եւ կ'օգտագործուին ծածկելու իրենց ձախողութիւնը:

Գ. – Իսկ հաղորդագրութեան այն կոչին, որ Հրապարակ ալիւս վերջ պետք է տայ իր գործերուն, որպէսզի յաւելեալ փաստաթուղթեր պետք չունենան հրատարակելու. Հրապարակի գրասենեակը կոչ ուղղեց երեսփոխան Ժեմայելիին եւ իր «նեցուկ»ներուն, որ ամէնէն մօտիկ առիթին դէմ յանդիման գանք՝ ուղղակի պատկերասփռումով եւ բոլոր իրականութիւնները միանգամըմիշտ համարձակութեամբ պարզենք: Այսպիսով առաջքը առած կ'ըլլանք նաեւ ճշգրիտ եւ անձնական շահերու համար կատարուող իրականութեան կեղծումներուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ...

Ծառուճակուած՝ 7րդ ԷջէԳ

Ֆորնիայէն Չարլզ Կարապետեան պիտի գծէ երկու գեղանկար:

Մրագիրին իրականացումը արդէն սկսած է 1998ին: Անկա պիտի արժէ 300 հազար տոլար: Չաճ կը հովանաւորէ Երաժշտութեան եւ Արուեստներու Արփա Հիմնարկը, որ կը փորձէ նուիրատուութիւններ ապահովել եւ կամաւոր օգնականներէ բաղկացած մարզուած մը գոյացնել արուեստի այն իրադարձութիւնը յաջողցնելու համար:

«Կարաւան ծրագիր»ին վերաբերեալ յաւելեալ տեղեկութիւններ կարելի է ստանալ դիմելով համացանցի հետեւեալ կայքին. www.caravanproject.com

ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄԱՌԻՑ ԸՆԴՈՒՆԵՑ ՖԻՆԻԻԼԻ...

Ծառուճակուած 2րդ ԷջէԳ

Չոր. Թիուարի իր կարգին ըսաւ Համմուտի, որ արդէն իսկ տեղեակ պահած է ՄԱԿը այս գծով եւ տակաւին կը շարունակէ կապ պահել պատահանատու մարմիններու հետ: Ան յայտնեց նաեւ, որ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան, ինչպէս նաեւ ՄԱԿի անդամ այլ երկիրներ դատապարտած են Իսրայէլի կողմէ Լիբանանի վրայ կատարուած օրինախախտումները:

Համմուտ նշեց, որ

Կոր. Թիուարի Լիբանանի կառավարութեան հետ գործակցութեան եւ լաւ յարաբերութիւններու մշակման փափաք յայտնած է:

Չոր. Թիուարի ընդգծեց, որ Ղաժար գիւղին մէջ ամէն ինչ հանդարտ վիճակի մէջ է եւ «Կապոյտ Գիծ»ը երբեք չէ խախտուած: Ան ուրախութիւն յայտնեց Լիբանանի գաղութներու համար եւ ըսաւ, որ Ֆինիլի ուժերը ճիգ պիտի չինապեն լիբանանցի ժողովուրդին

իրաւունքներուն գծով:

Միւս կողմէ, նախարար Համմուտ հեռաձայնային խօսակցութիւն մը ունեցաւ արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Ջուէէյր Համտանի հետ: Համտան, որ Լիբանանը կը ներկայացնէ ցեղապաշտութեան դէմ ՄԱԿի խորհրդածոյողին (Տրապրի մէջ), յայտնեց, որ տարբեր կողմերուն միջեւ բանակցութիւնները դիւրին չեն, իսկ խորհրդածոյողին մասնակցող երրօրեայ Միութեան արաբական երկիրներու, իսլամական երկիրներու եւ արեւելեան երկիրներու պատուիրակութիւնները տակաւին յստակ տեղեկագիրի մը չհասան:

Համմուտ դատապարտեց ամերիկեան պատուիրակութիւնը, որ քաշուեցաւ խորհրդածոյողովէն, ըսելով, որ այս քայլը կը դանդաղեցնէ միջապային հարցեր լուծելու ՄԱԿի գործունեութիւնը:

Համմուտ ընդունեց նաեւ երեսփոխան Նասեր Քանտիլը, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ Քուէյթի նոր դեսպան Ալի Սէյման Սախոր:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 4950

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ԸՈՐԻՁՈՆԱԿԱՆ

ՈՒՂՂԱՇԱՅԵԱՑ

1. Մեծ, վիթխարի:
2. Ուսուցիչ - Տառի մը անունը:
3. Վայրի կենդանի - Ոտնաման:
4. «Զօրաւոր» խաղաթուղթ - Ճանչուր - Յուսկան ամական:
5. Կառավարչական թեմ - Խաղաթուղթ:
6. Թաքուն պայթուցիկ - Ձիւթ:
7. Լեզուով մը՝ այլ՝ Ստալին ծննած Արարհամի որդին:
8. Սահմանում - 5090 - Թիթեղ:
9. Ազդեցության աւագ ջիւղ - Կողմ:
10. Արական օտար անուն - Իսլամական հանրապետութիւն:
11. Շոտլանդի - Ճափոնական դատական թատրոն - Կղզանքի ծակ:

1. Զին Կառավարանի առաջին հինգ գիրքերէն:
2. Պաշտօնէութեան ամբողջութիւն:
3. Օդանման գոյացութիւն - Յուսկան ամական:
4. Արեւելեան եփրատ - Միայն:
5. Կաթնած - Մեղուախումբ (հակ):
6. Հանքային համեմ - Միփեղ շաղախ:
7. Միջօրէ, օր հասարակ:
8. Ընտիր պնակ - Քաղցրաբոյր ծաղիկներով մեծ ծառ:
9. Լախտ, մանկալ - Այլուրեքէն:
10. Մովսէս մարգարէի յաջորդը - Նախամարգ:
11. Մազիլ - Շոտլանդ, փաղաքանք:

ԹԻԻ 4949

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Լ	Կ	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
2	Մ	Ր	Ո	Տ	Մ	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Պ	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
4	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ք	Է	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
9	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
10	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս


ՀԱՇՅԵՔ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՆՈՒԵՐՆԵՐ

Win up to
\$15,000 in prizes

Peugeot 206
Trip to Cyprus for 2 persons (6 nights)
2 FUJITSU air condition
2 General Electric washing machine
Sony HI FI DX5
Philips DVD 711 with zoom
Panasonic TV 21 inch
Sony TV 21 inch
Continental oven



Peugeot 206 ինքնաշարժ մը
2 անձի Կիպրոս ճամբորդութիւն (6 գիշեր)
2FUJITSU էր ընտրիսիոնէ
2 General Electric լուացքի մեքենայ
Sony հայ ֆայ Dx5
Philips DVD 711 գումով
Panasonic հեռատեսիլ 21 ինչ
Sony հեռատեսիլ 21 ինչ
Քոնթինենթալ փուռ



Արձանագրություն ամեն օր
ՓՕԼԻԿԼՈԹ ԹԵԶՆԻԲԸԼ ԲՈԼԵՃ,
Տոբա, հեռ. 01 - 251320 եւ 03 - 299484:
ՏԵՐ ԵՒ ՏԵՐԵՆ ՊԵՏՐՈՍ ՇԵՍՏԵՆԱՆ,



Մանկապատանեկան

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՅԱՆԻՇՆԵՐ

ՄԻՇՏ ԱԻԵԼԻ ՀԵՌՈՒ, ՄԻՇՏ ԱԻԵԼԻ ԲԱՐՁՐ...

Կարգ մը մարդիկ չեն վարանիր իրենց սահմաններէն միշտ աւելի անդին երթալու՝ գիտութիւնը յառաջացընելու կամ իրենց երագները իրականացնելու համար: Ոչինչ եւ ո՛չ որ կրնայ գանոնը կեցնել...

●ԱԻԵԼԻ ԱՐԱԳ
- Ո՛վ է աշխարհի ամէնէն արագ մարդը: Ամերիկացի տիմ Մօրիս կրին, որ կրնայ 100 մեթրը վազել 9 երկվայրկեան 87 հարիւրերորդէն:

- Աւստրալիացի Սիւզի Մարոնի կրցած է Մեքսիքայի եւ Քուպայի միջեւ գոյուլթիւն ունեցող 197 քիլոմետր տարածու-

թիւնը յողալ մօտաւորապէս 38 ժամէն: Ջուրին մէջ շանձուկերու ներկայութեան պատճառով ան յողացած է նաեւ փաշուած վանդակի մը պաշտպանութեամբ:

●ԱԻԵԼԻ ԲԱՐՁՐ
- Վստահարար ծանօթ եւ ժուլ Վեռնի «Աշխարհին շուրջ 80 օրէն» վէպին: Ջուրեգերիացի Պերթրան Փիքար եւ անգլիացի Պրայն Ճոնզ միասին աշխարհին շուրջ ճամբորդութիւն մը կատարած են օդապարիկով, առանց դադարի, նուազ քան քսան օրէն:


- Իտալացի լեռնագրէնաց Ռայնհոլտ Մեանէր



ցարդ միակ տնձն է, որ կրցած է մաղցիլ Հիմալայի 14 գագաթները:

●ԱԻԵԼԻ ՀԵՌՈՒ
- Անգլիացի Նոբոլաս Պոուզ գործածած է երեսուն գոյգ կօշիկ՝ Հարաւային Աֆրիկէէն քայելով Եգիպտոս երթալու համար: Ան աւելի քան 12 հազար քմ. կտրած է նուազ քան մէկ տարիէն:

●ԱԻԵԼԻ ԽՈՐՈՒՆԿ
- Իր հօրը կողմէ հնար-



ած տարօրինակ սուզանաւուն միջոցով գուլթիացի ժաք Փիքար կրցած է արձանագրել սուզուելու մրցանիշ մը 10,916 մեթր:

Սուզուելու այլ մրցանիշներ, այս անգամ առանց սուզանաւու կամ ուրիշ գործիքի. Փիքարի կրցած է իջնել մինչեւ 73 մեթր, առանց որեւէ պիտոյթի, իսկ պիտոյթներով օժտուած Լոյիք Լըֆօնը կրցած է հասնիլ 137 մեթր խորութեան: Իսկ Թէօ Մաւրոսթոմոս, պատիկ սնտուկի մը մէջ պահուած, կրցած է կտրել մրցանիշը՝ սուզուելով 701 մեթր:

Սակայն գիտէ՞ր, որ երբ մէկը կը սուզուի առանձինը եւ առանց պիտոյթի, անոր քով, ջուրին մակերեսին կամ ջուրին մէջ ուրիշ սուզուողներ միշտ պատրաստ կը գտնուին ի հարկին անոր օգնութեան հասնելու համար:


●ԱԻԵԼԻ ԾԱՆՐ
- Հիւսէյն Ռեզազատէ պէտք չունի քիլոներով չորմի ուտելու գորտեր ըլլալու համար: Իրանցի ծանրորդը կրցած է 212,5 քիլոկրամ չարկել առանց դժուարութեան:

ԿՈՒՋՈՒԻ
●Երիտասարդ պաշտօնէյ մը, 18ԵՆ 20 տարեկան, երկրորդական ուսումով, անուորական ընկերութեան մէջ աշխատելու համար: Հեռ. 01 - 258548:

STUDIO
Lantern
●Կը ստանձնէ ուրախ առիթներու video
Գկարահանումներ
Հեռ. 01-268866
եւ 02-995399

ԳԵՂԻԿ ԽԱՂԱՆԵ

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ...



Շատ հին ժամանակներուն յոյները եւ հռոմէացիները կը սիրէին խաղալ այսօր մեր սիրած խաղերէն շատերը:

●ՄԱՋԷ ԳՈՒՆԿԵՐ
Առաջին զնդակները շինուած են կտաւով կամ կաշիով. անոնք կարուած են եւ լեցուած՝ կենդանիներու մազերով: Այս շատ կարծր զնդակները ձեռքով կը նետուէին պատի մը... կամ թշնամիի մը վրայ:

●ԿԱՅՍՐԻՆ ԳՆԴԻՆԵՐԸ
Օգոստոս՝ հռոմէացի առաջին կայսրը, զնդիկ կը խաղար իր տարուկներուն հետ, 2000 տարիներ առաջ: Անոր զնդիկները ընկոյզներ էին:

●ԳՆԴԻԿ ԽԱՂԱՆԵ
Երկու հոգիով սկսած խաղ մը ընդհանրապէս կը վերջանայ տասը հոգիով: Այս խաղը շատ լաւ միջոց մըն է նոր ընկերներու ծանօթանալու համար: Գնդիկները գոյուլթիւն ունին հազարաւոր տարիներէ ի վեր. քարէ զնդիկներ զանուած են Հին Եգիպտոսի դամբարաններուն մէջ:

●ԳՆԴԻԿՆԵՐՈՒ ԴԵՇՏԸ
Պէտք ունիս՝ տափարակ հողամասի մը, 1 զնդիկ՝ իւրաքանչիւր խաղացողի համար (2 կամ աւելի խաղացողներ), մածուկի պղտիկ տուփերու, խաւաքարտի, մկրատի, խաւաքարտէ խողովակի մը (3 - 6 սմ. տրամագիծ, 30 սմ. երկայնք) եւ քարերու:

Առարկաները իրարմէ 2 մեթր հեռաւորութեամբ գետեղէ: Խաղացողները, իւրաքանչիւր՝ իր կարգին, իրաւունք ունի 3 հարուածի՝ արգելքներէն անցնելու համար: Անոնք պէտք է յաջողին մէկ հանգրուանին՝ միւսին կարենայ անցնելու համար: Առաջին խաղացողը, որ վերջին հանգրուանին կը հասնի, կը յաղթէ:

□ Ուսումնար: 30 սմ. x 10 սմ. խաւաքարտ մը կտրէ: Ջայն մեծ քարի մը վրայ դիր՝ մէկ կողմը վար իջեցընելով: Գնդիկը անոր վրայէն պէտք է անցնի՝ մէկ կողմէն ելլելով եւ միւս կողմէն իջնելով:

□ Ներքնուղին: Խաւաքարտէ խողովակը հաստատէ քարերու միջեւ: Գնդիկը անոր մէջէն պէտք է անցնի: Եթէ ան մէջը մնայ, գաւազանիկով մը հանէ եւ վերսկսէ:

□ Լարիւրիկոսը: Հողով լեցուր մածուկին 6 պղտիկ տուփեր եւ զանոնք սփռուած շարէ: Գնդիկը անոնց մէջէն պէտք է անցնի: Իւրաքանչիւր փորձի, զնդիկը դարձեալ արձակէ այն տեղէն, ուր հասած էր ան:

□ Բլուրը: Հողէ պղտիկ կոյտ մը պատրաստէ (մօտաւորապէս՝ 30 սմ. տրամագիծով եւ 20 սմ. բարձրութեամբ): Գագաթին երկու գաւազանիկ դիր՝ իրարմէ 10 սմ. հեռաւորութեամբ: Գնդիկը պէտք է «բլուրին» վրայ ելլէ, երկու գաւազանիկներուն մէջ տեղէն անցնի եւ միւս կողմէն իջնէ:

□ Ջուլ գոտակները: Առաջին ոստանակին նման, 2 ոստանակներ դէմ դրած գիր՝ իրարմէ 10 սմ. հեռաւորութեամբ: Գնդիկը պէտք է բարձրանայ առաջին ոստանակին վրայէն, կարէ հեռաւորութիւնը եւ իջնէ միւսին վրայէն:

□ Միւս փութը: 50 սմ. երկայնքով, 20 սմ. լայնքով եւ 5 սմ. խորութեամբ փոս մը փորէ: Գնդիկը պէտք է այս փոսէն անցնի:

□ Վերջին հանգրուան: 5 սմ. տրամագիծով եւ 5 սմ. խորութեամբ փոս մը փորէ: Ծակին մէջ առաջին ինկող զնդիկը կը յաղթէ:

ԵՐԶԱՊՏՈՅՏՆԵՐ ԿԻՊՐՈՍ ԵՒ ԱՇՏԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՅՈԱՍԵԱԿԻ ՆՇՈՒՄ ԸԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՃ


●21-28 Սեպտ. Երեւան, բացառիկ լման յայտագիր 550\$ եւ 635\$

●21 Սեպտ. - 5 Հոկտ. 14 օր Երեւան, Ծաղկածոր, Արցախ լման յայտագիր 935\$


●30 Սեպտ. - 7 Հոկտ. Երեւան, Ծաղկածոր լման պտոյտներով, թոյլը Հայկէն օդակայանի տուրով, Հայկէն երբ ու դարձով 385\$ եւ 430\$

●2-6 Սեպտ. Կիպրոս, Գինիի Փառատոն 260 \$
Արձանագրութեան համար դիմել՝
01-261177, 240654, 265068, 03-233978
Հալէպ՝ AL MOUHIT TRAVEL հեռ. 2214114


ԺԱՄԱՆՑ



Կրնա՞ս գտնել ձուկին հասցնող ձամբան:



Կրնա՞ս գտնել իրարու նմանող կոշիկները:




Ներկէ թիւերուն հետեւելով:
1 - կարմիր, 2 - վարդագոյն, 3 - կապոյտ, 4 - բաց կանաչ, 5 - գոց կանաչ:

Պատրաստեց՝ ԶՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

al-mashrek
INSURANCE & REINSURANCE S.A.L.
Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.
(01)258228 – (01)268808
Fax: (01) 258223


ԻՆՉՈՒԹԻՆՉՆԵՐԸ ԱՆՀԱՃՈՅԵՆ



Ճոննչները, ինչպէս սղոցի կամ գրատախտակին վրայի կաւիճին ձայնը, շատ սուր ձայներ են: Իսկ եթէ ձայն մը սուր է, ըսել է, թէ օդը շատ արագ կը թրթռայ:



Երբ ձայն մը ականջին կը հասնի, ան կը թրթռացնէ ականջին ներսի բաժինը. մենք այս ձեւով կը լսենք: Երբ ձայն մը սուր է, հետեւաբար ան շատ արագ կը թրթռացնէ ականջին ներսի բաժինը:



Ականջը չի հանդուրժեր շատ արագ թրթռացումները. այս պատճառով է, որ ձոննչի սուր ձայնը շատ անհաճոյ կը թուի:

ԱԶԳԱՅԻՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ՔՈԼԵԾ
Հեռ. 01 / 262618
E - mail: sofiahag@inco.com.lb

Ակադիա Լեւոն եւ Սոփիա Յակոբեան քոլէճի 2001 - 2002 կրթական տարեշրջանի հին եւ նոր աշակերտներու արձանագրութիւնները տեղի կ'ունենան Հինգշաբթի, 6 Սեպտեմբերին սկսեալ մինչեւ Ուրբաթ, 28 Սեպտեմբեր, բացի Շաբաթ օրերէն, ժամը 9:00էն 12:00:

Քոլէճը ունի ֆրանսերէնի եւ անգլերէնի բաժիններ:

Յառաջիկայ տարեշրջանին, քոլէճը պիտի ունենայ ժՔ. կարգի երեք դասարաններ. -

- Life Science
- Humanities & Literature
- Sociology & Economics

Վերաքննութիւններն ու մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան հետեւեալ թուականներուն. -

- Երեքշաբթի, 11 Սեպտեմբեր - լեզուներ
- Չորեքշաբթի, 12 Սեպտեմբեր - գիտական նիւթեր
- Հինգշաբթի, 13 Սեպտեմբեր - այլ նիւթեր

Վերաքննութիւնները կը սկսին առաւօտեան ժամը 8:30ին:

ԺՔ. կարգի եւ Թ. կարգի դասաւանդութիւնները կը սկսին Երեքշաբթի, 18 Սեպտեմբերին:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐԻՍՏ

21 ԲԻՐՏԵՐ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱՆ ԵՐԵՎ

ԹՈՒՆԶԵԼԻ, 7 (ՌՈՅԹԸՐԶ) - Թրքական ոստիկանությունը երեկ 21 քիլոպեր ձերբակալած է, երբ անոնք ցոյց մը կը կապարէին Թունչելիի մէջ: Անոնք բոլորն ալ Թուրքիոյ մէջ քրտական օրինական միակ կուսակցութեան ՀԱՏԷՓի անդամ են: 50 հոգիինց խմբակ մը երեկ ցոյց

կը կապարէր իրեն բողոք անցնելու շարք արեւի ունեցած մեծարի ձերբակալութիւններուն դէմ: Զերբակալութեան բուն շարքին է նաեւ

ՀԱՏԷՓի Թունչելիի քեփի ղապասխանաւորուն Ալիքան Ունլու: Ոստիկանութիւնը երէկուան ցոյցը ցրուելու համար գործածած է բիրեր:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԻ...

Շարունակուած Ա. Էջէն

Թեան ձեւաւորումէն: Կ'ուզեմ աւելցնել, որ ես կողմնակից եմ Հայաստանի մէջ երկբայաբա-

ցիութեան օրէնքի ընդունման: Այսքան ընդարձակ եւ պատմականօրէն ձեւաւորուած Սփիւռք ունեցող երկիր մը պէտք է իր հայրենակիցներուն ընտել միջոցներ՝ ամրապնդելու կապերը պատմական հայրենիքին հետ:

Հ. «Ա.Ռ.Կ.Ա.» ԼՐԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԼՈՒԹԻՒՆ. ԵՐԵՎԱՆ. Զեր կարծիքով ո՞րքան արդիւնաւետ է «Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնաժողով»-ի ստեղծումը, եւ անոր ցործուելու քիւրքը ինչպէս կրնայ ազդել Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւններուն վրայ:

Պ.- Հայաստանը կը պաշտպանէ որեւէ քայլ, որ ուղղուած է Թուրքիոյ հետ քաղաքակիրթ, բարի գրացիական յարաբերութիւններուն հաստատումին: Միաժամանակ, հաշտի առնելով, որ ասիկա չափ զգալուն հարց է, ցանկալի է, որ հայ - Թրքական յարաբերութիւններուն վերաբերող հարցերը քննարկուին կամ պետական մակարդակով, որմէ Հայաստանը երբեք չէ խուսափած, կամ քաղաքական ուժերու ամենալայն ընդգրկումով, եւ նախապէս համաձայնութեամբ քայլերով:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
«ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ»
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲՈՒԼԵՆ

ՎԵՐԱՍՈՒՏ

Համազգային «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի 2001-2002 տարեշրջանի արձանագրութիւնները կը սկսին Երկուշաբթի 17 Սեպտեմբերին եւ կը շարունակուին ամէն օր, բացի Շաբաթ օրերէն, կէսօրէ ետք ժամը 3:00-է 7:00: Վերամուտ՝ Երկուշաբթի 8 Շոկտեմբեր: ԵԱՆՕԹ. Յաւելալ մանրամասնութեանց համար դիմել երաժշտանոցի քարտուղարութեան. հեռ. 01-265899 եւ 01-249375:

ՄԻՍԻԹԱՐԵԱՆ ԺԱՌԱՆԳԱՌՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ (ՊԻՔՅԱՅԱ)

Միսիթարեան Ժառանգաւորաց վարժարանի տեսչութիւնը նոր սաներ կ'ընդունի 2001-2002 կրթական տարեշրջանի համար: Կրնան դիմել նախակրթարան աւարտած պատանիներ: Արձանագրութիւնները արդէն սկսած են եւ կը տեւեն մինչեւ Սեպտեմբերի վերջը: Թեկնածուները պարտին իրենց հետ ունենալ երկու լուսանկար, վերջին տարեշրջանի վիճակացոյցի պատճէն, անձնաթուղթի կամ ինքնաշարժի պատճէն, բժշկական վկայագիր: Մանրամասնութեանց համար հեռաձայնել տեսչութեան. Հեռ. 04 - 981077, 03 - 753313:

ԴՊՐԵՎԱՆԵՐ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Ս. ԱԳՆԵՍ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆ

Հեռ. 01-261139

Ս. Ագնես վարժարանի 2001-2002 տարեշրջանի արձանագրութիւնները լրացուցիչ շրջանը կը սկսին Երկուշաբթի, 10 Սեպտեմբեր 2001ին եւ կը տեւեն մինչեւ Ուրբաթ, 28 Սեպտեմբեր 2001: Գրասենեակը բաց է ամէն օր առաւօտեան ժամը 8:30-է 1:00 բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնութեան քուղթին լուսապատճէնը կամ ինքնաշարժի, պատուաստներու եւ առողջ վիճակի վկայագիր եւ 5 լուսանկար:

Գիրքերը եւ համազգեստները կը վաճառուին՝ Երեքշաբթի, 18 Սեպտեմբերէն մինչեւ 28 Սեպտեմբեր:

Վերաքննութիւնները կը կատարուին Հինգշաբթի, 13 Սեպտեմբերին, առաւօտեան ժամը 9:00ին: ՎԵՐԱՍՈՒՏ

- Երեքշաբթի, 18 Սեպտեմբեր, 9րդ դասարան (Պրոֆ):


- Հինգշաբթի, 27 Սեպտեմբեր, միջնակարգ եւ նախակրթարան:

- Երեքշաբթի, 3 Շոկտեմբեր մանկապարտգ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 4951

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

ՈՒՂԱՇԱՅԵԱՑ

1. Վերնակոշիկ:
2. Ուրուական - Հայկական Տաւրոսի լեռներէն:
3. Արդեաւական Տկար, անգոր:
4. Կայտառ, եռանդուն - Արական անուն:
5. Մարտունիի գիւղերէն - Կեռիկ, ջուր կրելու աման:
6. Ժանտաշտ ձառեղ կենդանի - Օղի խառնակութիւն:
7. Օրինակելի վարք ունեցող - Հոյսովակերտ մասնիկ:
8. Հայաստանի դաշտերէն:
9. Արական օտար անուն - Շահաստան:
10. Հողեգաւակ - Ձիու կոնակ - Ժամանակի միաւոր (հակ):
11. Անձնական գերանուն - Տուալթ - Մանր ճոզ - Որթատունկի կարուած ճիւղ:

1. Ափրիկեան երկիր - Տիգրան Օտեան՝ գլուխը կախ:
2. Շիճուկ - Կատուրայ, միգաման:
3. Կրկնուած բաղաձայններ - Բախտախաղի մայր:
4. Կանաչուրակ պատուական քար:
5. Շաղկապ - Պատշաճ - Յուշական ածական:
6. Ազամանդի ճեղք - Նուրբ ալիւր:
7. Յոգի, լիցք - Մարախ:
8. Արական օտար անուն - Նորէն:
9. Մանուկ, խանձարուր:
10. Հնձուած ցորենի խուրձ - Վախկոտ:
11. Անձնական գերանուն - Մեքենայի կլոր ձող - Որթատունկի կարուած ճիւղ:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2	3	4	5	6	7	8	9	10	11	12
3	4	5	6	7	8	9	10	11	12	13
4	5	6	7	8	9	10	11	12	13	14
5	6	7	8	9	10	11	12	13	14	15
6	7	8	9	10	11	12	13	14	15	16
7	8	9	10	11	12	13	14	15	16	17
8	9	10	11	12	13	14	15	16	17	18
9	10	11	12	13	14	15	16	17	18	19
10	11	12	13	14	15	16	17	18	19	20
11	12	13	14	15	16	17	18	19	20	21

ԹԻԻ 4950

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

ՀԱՇՅԵՔ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԵՔԱԻՈՐ ՆՈՒԵՐՆԵՐ

Win up to
\$15,000 in prizes

Peugeot 206
Trip to Cyprus for 2 persons (6 nights)
2 FUJITSU air condition
2 General Electric washing machine
Sony HI FI DX5
Philips DVD 711 with zoom
Panasonic TV 21 inch
Sony TV 21 inch
Continental oven



Peugeot 206 ինքնաշարժ մը
2 անձի Կիպրոս ճամբորդութիւն (6 գիշեր)
2 FUJITSU էր քոնտիսիոնէ
2 General Electric լուսացի մեքենայ
Sony հայ ֆայ DX5
Philips DVD 711 զուտով
Panasonic հեռատեսիլ 21 ինչ
Sony հեռատեսիլ 21 ինչ
Ընթրիններու փուռ

